
ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2026



ԱՄԿ ծրագրի ամփոփիչ միջոցառմանը ներկայացվեցին ոչ ֆորմալ աշխատանքի կանխման և ֆորմալացմանն անցման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքները

Ո՞վ պետք է վճարի աշխատողի առողջության ապահովագրության համար. արհմիությունների և գործատուների դիրքորոշումները

Ֆելեսֆորբունդետի (Նորվեգիայի Միավորված արհմիություն) պատվիրակությունը հանդիպել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի հետ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հյուրընկալեց FNV Vakbond-ի եվ PSI-ի համատեղ պատվիրակությանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ




- Ողջույնի խոսք
- Ֆելեսֆորբունդետի (Նորվեգիայի Միավորված արհմիություն) պատվիրակությունը հանդիպել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի հետ
- Ո՞վ պետք է վճարի աշխատողի առողջության ապահովագրության համար. արհմիությունների և գործատուների դիրքորոշումները
- PSI և FNV համատեղ պատվիրակությունների այցը Հայաստան
- Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հյուրընկալեց FNV Vakbond-ի եվ PSI-ի համատեղ պատվիրակությանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



- Ծաղկաձորում անցկացվեց «Աշխատանքային իրավունք, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների մշտադիտարկում» թեմայով երկօրյա սեմինար
- Առողջ և անվտանգ աշխատանքային պայմանները՝ առողջ հասարակության հիմք
- Սեմինար Տրանսպորտի և հաղորդակցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային անրապետական միության անդամների համար
- ԱՄԿ ծրագրի ամփոփիչ միջոցառմանը ներկայացվեցին ոչ ֆորմալ աշխատանքի կանխման և ֆորմալացմանն անցման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքները
- Հայաստանի արհմիությունները աջակցում են ֆորմալ զբաղվածության անցմանը



ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրն լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը:

Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

ՖԵԼԵՍՖՈՐԲՈՒՆԴԵՏԻ (ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ) ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻ ՀԵՏ



Ֆելեսֆորբունդետի (Նորվեգիայի Միավորված արհմիություն) պատվիրակությունը հանդիպել է Հայաստանի արհմիությ

Ֆելեսֆորբունդետի (Նորվեգիայի Միավորված արհմիություն) պատվիրակությունը հանդիպել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանի հետ: ...

hamk.am



Ո՞Վ ՊԵՏՔ Է ՎՃԱՐԻ ԱՇԽԱՏՈՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



https://www.youtube.com/watch?v=Qzs9juI9jDA

PSI ԵՎ FNV ՀԱՄԱՏԵՂ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ



PSI և FNV համատեղ պատվիրակությունների այցը Հայաստան

Միջազգային գործընկերներն այցի շրջանակներում հանդիպում ունեցան մեր ակտիվի հետ, ներկայացրեցին Նիդեռլանդներում բանակցությունների համակարգը

Հայաստանի պետհիմնարկների / Oct 13

https://arhmiutyun.org/2026/09/03/psi-and-fnv-joint-delegation-visit-to-armenia/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ FNV VAKBOND-Ի ԵՎ PSI-Ի ՀԱՄԱՏԵՂ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ



Հայաստան կատարած այցի շրջանակներում Նիդեռլանդների արհմիությունների **FNV Vakbond**-ի և Հանրային ծառայությունների միջազգային միության **(PSI – Public Services International)** համատեղ պատվիրակության անդամներին հյուրընկալեց Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) նախագահ Էլեն Մանասերյանը:

Հանդիպման ընթացքում Էլեն Մանասերյանը ներկայացրեց ՀԱՄԿ-ի գործունեության հիմնական ուղղությունները, իրականացվող աշխատանքներն ու արհմիութենական շարժման առջև ծառացած խնդիրները:

Պատվիրակության անդամները հնարավորություն ունեցան հարցեր ուղղելու ՀԱՄԿ-ի նախագահին և ստանալու իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:





Նման հանդիպումները կարևոր նշանակություն ունեն միջազգային արհմիութենական համագործակցության ամրապնդման, փորձի փոխանակման և աշխատողների իրավունքների պաշտպանությանն ուղղված համատեղ նախաձեռնությունների զարգացման տեսանկյունից:

Միջազգային գործընկերների հետ երկխոսությունը նպաստում է արհմիությունների միջև կապերի խորացմանը և աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում համագործակցության նոր հնարավորությունների ձևավորմանը:



ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՌՈՂՋ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԵՐԿՕՐՅԱ ՍԵՄԻՆԱՐ

Սեպտեմբերի 5-6-ը Ծաղկաձորում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական և անտառային համակարգերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամների համար նախատեսված երկօրյա սեմինար՝ նվիրված աշխատանքային իրավունքների պաշտպանությանը, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովմանը և արհմիության առջև ծառացած հիմնախնդիրներին:

Սեմինարի նպատակն էր բարձրացնել արհմիության անդամների իրազեկվածությունը սեփական աշխատանքային իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աշխատավայրում անվտանգության կանոնների պահպանմանն ու աշխատանքային պայմանների մշտադիտարկմանն առնչվող ժամանակակից մոտեցումները:

Դասընթացը կազմակերպվել էր Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական և անտառային համակարգերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից՝ հաշվի առնելով ոլորտում առկա մարտահրավերները և աշխատողների համար առողջ ու անվտանգ աշխատանքային միջավայր ապահովելու կարևորությունը:

Սեմինարի երկու օրերի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու աշխատանքային իրավունքներին, քննարկելու գործնական օրինակներ, կիսվելու իրենց փորձով և ստանալու իրենց հուզող հարցերի պատասխանները: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց աշխատողների իրավունքների պաշտպանության, աշխատանքային անվտանգության կանոնների պահպանման և արհմիության դերի կարևորության հարցերին:

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովումը յուրաքանչյուր աշխատողի հիմնարար իրավունքն է: Դրա պաշտպանությունը պահանջում է հետևողական աշխատանք, իրազեկվածություն և սոցիալական գործընկերների համագործակցություն:

https://www.facebook.com/profagro.union/posts/pfbid0ZiBFvTHs5tYcTHEMnwGVuT7RUcshh8KjMhQxb6j7R1pX6CpJTGzuLtgV3Moprup1l?locale=hy_AM

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմանները՝ առողջ հասարակության հիմք

Սեպտեմբերի 10-ին՝ COP 17-ին ընդառաջ, կազմակերպվեց հանդիպում-քննարկում՝ «Առողջ և անվտանգ աշխատանքային պայմանները ոլորտում՝ որպես առողջ հասարակության հիմք» թեմայով։

Հանդիպման նպատակն էր անդրադառնալ ոլորտում առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման կարևորությանը, բարձրաձայնել առկա խնդիրները և քննարկել դրանց լուծման հնարավոր ուղիները։

Հանդիպման ընթացքում Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական և անտառային համակարգերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Հասմիկ Ջհանգիրյանը հակիրճ ներկայացրեց միության՝ տարիների ընթացքում իրականացրած աշխատանքները, ինչպես նաև մշակված և տարածված տեղեկատվական նյութերը, որոնք միտված են աշխատանքային անվտանգության և առողջության պահպանման վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը։

Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական և անտառային համակարգերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը շուրջ 17 տարի հետևողականորեն ուսումնասիրում և բարձրաձայնում է այս ոլորտին առնչվող խնդիրները՝ հանդես գալով դրանց լուծմանն ուղղված առաջարկություններով։

Հանդիպման մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը՝ ընդգծելով թեմայի կարևորությունը և սոցիալական գործընկերության դերն աշխատանքային պայմանների բարելավման գործում։ Քննարկմանը հեռավար ձևաչափով միացավ նաև Ուկրաինայի ոլորտային գործընկերը՝ Ագրո ՃՀՄ-ի նախագահ Սվետլանա Սամոսուդը։

Հանդիպումը ևս մեկ հնարավորություն էր՝ համախմբելու ոլորտի ներկայացուցիչների ջանքերը, փոխանակելու փորձը և ընդգծելու, որ առողջ ու անվտանգ աշխատանքային պայմանների ապահովումը ոչ միայն աշխատողների իրավունքների պաշտպանության, այլև առողջ և կայուն հասարակության ձևավորման կարևոր նախապայման է։

Առողջ և անվտանգ աշխատանքային միջավայրը յուրաքանչյուր աշխատողի իրավունքն է և հասարակության բարեկեցության կարևոր հիմքերից մեկը։



https://www.facebook.com/profagro.union/posts/pfbid037vepHunty5Yu1HhappfJW8EruyHE31dAsAC2KBUNwEkiN75xEkMD5Lv3m3nBQVdxl?locale=hy_AM

ՍԵՄԻՆԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 19-20-ը Ծաղկաձորում Տրանսպորտի և հաղորդակցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից կազմակերպվել է սեմինար՝ միության անդամների համար:
Սեմինարի ընթացքում մասնակիցները ծանոթացել են «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված արհեստակցական միությունների իրավունքներին, դրանց իրականացման իրավական մեխանիզմներին և աշխատողների իրավունքների պաշտպանության գործում արհմիությունների դերակատարությանը:







ԱՄԿ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՖՈՐՄԱԼԱՑՄԱՆՆ ԱՆՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



ԱՄԿ ծրագրի ամփոփիչ միջոցառմանը ներկայացվեցին ոչ ֆորմալ աշխատանքի կանխման և ֆորմալացմանն անցման ուղղո

Տեղի ունեցավ ԱՄԿ լիազոր գործընկերների կարողությունների զարգացում՝ աշխատանքի ոչ ֆորմալ դրսևորումների կանխման և ֆորմալացմանն անցմանը խթանման ուղղությամբ, փախստակա...

hamk.am

https://shorturl.at/GDuhR

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ ՖՈՐՄԱԼ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՑՄԱՆԸ



https://www.youtube.com/watch?v=3zoRIN3vLM0



Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ
Հեռ. ՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am